ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ №102

«24» 12 2021 թ. ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 11.11.2021թ. N1864-Լ և 23.12.2021թ. N2163-Ն որոշումները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

**Հ ր ա մ ա յ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 19.01.2021թ. «Փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2021 թվականի պետական պատվերի մասին» N 1 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանի 3-րդ կետում «(կցվում է)» բառից հետո ավելացնել «և հավելված 1-ի (կցվում է)» բառերը,

2) Հրամանի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2021 թվականի ընթացքում տվյալ ծրագրին հատկացումների ընդհանուր գումարի սահմաններում անհրաժեշտության դեպքում փոփոխել սույն հրամանի հավելվածով և հավելված 1-ով սահմանված փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման ենթակա քանակը՝ ըստ փորձաքննությունների առանձին տեսակների և ենթատեսակների, եթե Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դատարանների (քրեական գործերով) կամ քրեական հետապնդման մարմինների կողմից ըստ այդ տեսակների և ենթատեսակների նշանակված փորձաքննությունների փաստացի քանակը չի համապատասխանի հավելվածով և հավելված 1-ով նախատեսվածին:»,

3) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 19.01.2021թ. «Փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2021 թվականի պետական պատվերի մասին» N 1 հրամանը լրացնել նոր՝ հավելված 1-ով՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի գործողությունը տարածվում է 2021 թվականի դեկտեմբերի 17-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարին և «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

**Ա. ԴԱՎԹՅԱՆ**

Հավելված
ՀՀ գլխավոր դատախազի
2021 թվականի դեկտեմբերի 24-ի
N 102 հրամանի

«Հավելված 1
ՀՀ գլխավոր դատախազի
2021 թվականի հունվարի 19-ի
N 1 հրամանի

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-ԻՑ 29-Ը ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿԸ ԸՍՏ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ

| Փորձաքննության տեսակը և կոդը | | Փորձաքննության ենթատեսակը և կոդը | | Միավորի նախահաշվային արժեքը /դրամ/ | Քանակը /հատ/ | Ընդամենը նախահաշվային արժեքը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| Ձեռագրաբանական | 01 | Ձեռագրի փորձաքննություն | 01-01 | 63000 | 3 | 189.0 |
| | | Ստորագրության փորձաքննություն | 01-02 | 54000 | 16 | 864.0 |
| Փաստաթղթաբանական | 03 | Փաստաթղթի և/կամ դրա պատրաստման եղանակի փորձաքննություն | 03-01 | 72000 | 5 | 360.0 |
| | | Փաստաթղթի ռեկվիզիտների փորձաքննություն | 03-02 | 72000 | 4 | 288.0 |
| | | Դրամանիշերի և/կամ արժեթղթերի փորձաքննություն | 03-03 | 36000 | 10 | 360.0 |
| | | Փաստաթղթի ռեկվիզիտների նյութի նույնականացման և/կամ ռեկվիզիտների կատարման վաղեմության փորձաքննություն | 03-04 | 126000 | 3 | 378.0 |
| | | Փաստաթղթաբանական տեսակի այլ օբյեկտների փորձաքննություն | 03-05 | 54000 | 2 | 108.0 |
| Տեսաձայնագրային | 04 | Ձայնի և հնչող խոսքի փորձաքննություն վերծանման նպատակով | 04-01 | 72000 | 3 | 216.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ձայնագրությունների ձայնային միջավայրի, պայմանների, միջոցների, նյութերի և հետքերի փորձաքննություն | 04-02 | 72000 | 2 | 144.0 |
| | | Ձայնի և հնչող խոսքի փորձաքննություն անձի նույնականացման նպատակով | 04-03 | 72000 | 3 | 216.0 |
| | | Տեսապատկերի, տեսագրությունների պայմանների, միջոցների, նյութերի և հետքերի փորձաքննություն | 04-04 | 72000 | 2 | 144.0 |
| Ֆոտոտեխնիկական և դիմանկարային | 05 | Լուսանկարի ֆոտոտեխնիկական փորձաքննություն | 05-01 | 54000 | 2 | 108.0 |
| | | Լուսանկարի փորձաքննություն անձի դիմանկարային նույնականացման նպատակով | 05-02 | 63000 | 2 | 126.0 |
| Հետքաբանական | 06 | Մարդու կամ կենդանիների կողմից թողնված հետքերի փորձաքննություն | 06-01 | 36000 | 9 | 324.0 |
| | | Առարկաների, գործիքների, մեխանիզմների և դրանց կողմից թողնված հետքերի փորձաքննություն | 06-02 | 45000 | 11 | 495.0 |
| | | Տրանսպորտային միջոցների, դետալների և դրանց կողմից թողնված հետքերի փորձաքննություն | 06-03 | 72000 | 13 | 936.0 |
| | | Սառը և նետողական զենքի փորձաքննություն | 06-04 | 45000 | 7 | 315.0 |
| Ձգաբանական | 07 | Հրազենի և դրա փամփուշտների փորձաքննություն | 07-01 | 54000 | 9 | 486.0 |
| | | Հրազենային վնասվածքների և հետքերի, կրակոցի հանգամանքների փորձաքննություն | 07-02 | 54000 | 10 | 540.0 |
| | | Կրակոցի հետքերի և արգասիքների քիմիական փորձաքննություն | 07-03 | 54000 | 10 | 540.0 |
| | | Հրազենի հատուկ դրոշմվածքի պարզման փորձաքննություն | 07-04 | 36000 | 7 | 252.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Պայթունատեխնիկական | 08 | Պայթուցիկ նյութերի, դրանց պայթյունի արգասիքների և հետքերի փորձաքննություն | 08-01 | 99000 | 2 | 198.0 |
| | | Ռազմամթերքների, պայթուցիկ սարքավորումների և դրանց պայթյունի հետքերի փորձաքննություն | 08-02 | 99000 | 2 | 198.0 |
| | | Վառոդների, հրագործական բաղադրությունների և դրանց այրման հետքերի փորձաքննություն | 08-03 | 99000 | 4 | 396.0 |
| Նյութագիտական | 09 | Մանրաթելերի և գործվածքների փորձաքննություն | 09-01 | 36000 | 7 | 252.0 |
| | | Լաքուներկերի և ներկածածկույթների փորձաքննություն | 09-02 | 72000 | 4 | 288.0 |
| | | Նավթամթերքների և վառելիքաքսուկային նյութերի փորձաքննություն | 09-03 | 72000 | 1 | 72.0 |
| | | Մետաղների և համաձուլվածքների փորձաքննություն | 09-04 | 36000 | 16 | 576.0 |
| | | Հեղուկ կամ պինդ նյութերի փորձաքննություն ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրիայի մեթոդի կիրառմամբ | 09-05 | 126000 | 2 | 252.0 |
| | | Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, մինեռալների, հանքային ապարների փորձաքննություն | 09-06 | 72000 | 1 | 72.0 |
| | | Ապակու, սիլիկատային, կերամիկական կամ նմանատիպ այլ ծագման նյութերի փորձաքննություն | 09-07 | 72000 | 1 | 72.0 |
| | | Ռետինե, պլաստմասսե կամ այլ պոլիմերային նյութերի փորձաքննություն | 09-08 | 72000 | 3 | 216.0 |
| | | Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, դեղամիջոցների, խիստ ներգործող և թունավոր նյութերի փորձաքննություն | 09-09 | 72000 | 16 | 1152.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Սպիրտ պարունակող ոչ սննդային նշանակության հեղուկների, նաև պարֆյումերային արդյունաբերության արտադրանքի փորձաքննություն | 09-10 | 72000 | 1 | 72.0 |
| | | Անհայտ ծագման նյութերի փորձաքննություն | 09-11 | 90000 | 1 | 90.0 |
| Սննդամթերքի և խմիչքների | 10 | Սննդամթերքի և դրա հումքի որակական ցուցանիշների փորձաքննություն | 10-01 | 54000 | 2 | 108.0 |
| | | Սննդամթերքի և դրա հումքի անվտանգության ցուցանիշների (բացի մանրէաբանական) փորձաքննություն | 10-02 | 72000 | 2 | 144.0 |
| | | Սննդամթերքի և դրա հումքի անվտանգության ցուցանիշների մանրէաբանական փորձաքննություն | 10-03 | 72000 | 2 | 144.0 |
| | | Ալկոհոլային, թույլ ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքների և դրանց հումքի որակական ցուցանիշների փորձաքննություն | 10-04 | 54000 | 2 | 108.0 |
| | | Ալկոհոլային, թույլ ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքների և դրանց հումքի անվտանգության ցուցանիշների (բացի մանրէաբանական) փորձաքննություն | 10-05 | 72000 | 2 | 144.0 |
| | | Թույլ ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքների և դրանց հումքի անվտանգության ցուցանիշների մանրէաբանական փորձաքննություն | 10-06 | 72000 | 3 | 216.0 |
| Հողագիտական և կենսաբանական | 11 | Հողային ծագման օբյեկտների փորձաքննություն | 11-01 | 36000 | 4 | 144.0 |
| | | Բուսական ծագման օբյեկտների փորձաքննություն առանց դենդրոխրոնոլոգիական մեթոդի կիրառման | 11-02 | 36000 | 15 | 540.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Բուսական ծագման օբյեկտների փորձաքննություն դենդրոխրոնոլոգիական մեթոդի կիրառմամբ | 11-03 | 36000 | 31 | 1116.0 |
| | | Կենդանական ծագման օբյեկտների փորձաքննություն | 11-04 | 36000 | 4 | 144.0 |
| Հրդեհատեխնիկական | 12 | Հրդեհից վնասված շենքերի և շինությունների, այլ առարկաների կամ կառուցվածքների փորձաքննություն | 12-01 | 81000 | 9 | 729.0 |
| | | Հրդեհից վնասված հողատարածքների փորձաքննություն | 12-02 | 81000 | 4 | 324.0 |
| | | Հրդեհից վնասված շարժական գույքի փորձաքննություն | 12-03 | 81000 | 2 | 162.0 |
| | | Նյութերի և սարք-սարքավորումների, այդ թվում տեխնոլոգիական գործընթացների հրդեհավտանգ հատկությունների և սարքավորումների աշխատանքի հրդեհավտանգ ռեժիմների փորձաքննություն | 12-04 | 72000 | 5 | 360.0 |
| | | Տեխնոլոգիական գործընթացների, տեխնոլոգիական սարք-սարքավորումների, շենքերի, շինությունների հրդեհային անվտանգության նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանության, դրանց հրդեհավտանգավորության և հակահրդեհային սարքավորումներով ապահովվածության փորձաքննություն | 12-05 | 81000 | 0 | 0.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Հրդեհաշիջման ընթացքում հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների գործողությունների փորձաքննություն | 12-06 | 81000 | 0 | 0.0 |
| Շինարարատեխնիկական | 13 | Շենքերի, շինությունների, ճարտարագիտական գծային կառուցվածքների ճանապարհաշինարարական և այլ կառուցապատման օբյեկտների փորձաքննություն | 13-01 | 81000 | 11 | 891.0 |
| | | Շենքերի, շինությունների, ճարտարագիտական գծային կառուցվածքների ճանապարհաշինարարական և այլ կառուցապատման օբյեկտների քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն | 13-02 | 90000 | 8 | 720.0 |
| | | Շենքերի, շինությունների, ճարտարագիտական գծային կառուցվածքների տեխնիկական վիճակի և/կամ ինժեներատեխնիկական փորձաքննություն | 13-03 | 81000 | 6 | 486.0 |
| | | Հողաշինարարական փորձաքննություն | 13-04 | 63000 | 8 | 504.0 |
| Ավտոտեխնիկական | 14 | Ճանապարհատրանսպորտային պատահարի փորձաքննություն | 14-01 | 36000 | 13 | 468.0 |
| | | Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի փորձաքննություն | 14-02 | 72000 | 5 | 360.0 |
| | | Ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման հանգամանքների պարզման տրանսպորտային հետքաբանական փորձաքննություն | 14-03 | 72000 | 6 | 432.0 |
| | | Ճանապարհի տեխնիկական վիճակի, ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում ճանապարհային պայմանների փորձաքննություն | 14-04 | 45000 | 2 | 90.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Տրանսպորտային միջոցների վերականգնման, վերանորոգման և մնացորդային դետալների պիտանելիության փորձաքննություն | 14-05 | 45000 | 3 | 135.0 |
| Ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական | 15 | Դատահաշվապահական փորձաքննություն | 15-01 | 126000 | 6 | 756.0 |
| | | Ֆինանսաատնտեսագիտական փորձաքննություն | 15-02 | 126000 | 5 | 630.0 |
| Ապրանքագիտական | 16 | Պարենային, ոչ պարենային ապրանքների, կենսաբազմազանության օբյեկտների, ծառայությունների, դրանց փաստաթղթերի, այդ թվում արժեքային ցուցանիշների փորձաքննություն | 16-01 | 36000 | 26 | 936.0 |
| | | Տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի, այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների փորձաքննություն | 16-02 | 45000 | 15 | 675.0 |
| | | Բարդ կառուցվածքային առանձնահատկություններ ունեցող արտադրական կամ այլ ապրանքային համալիրների, այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների փորձաքննություն | 16-03 | 144000 | 1 | 144.0 |
| | | Ոչ նյութական ակտիվների, այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների փորձաքննություն | 16-04 | 144000 | 1 | 144.0 |
| | | Անշարժ գույքի, այդ թվում դրա արժեքային ցուցանիշների փորձաքննություն | 16-05 | 54000 | 15 | 810.0 |
| | | Շինարարական նյութերի և աշխատանքների, այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների փորձաքննություն | 16-06 | 54000 | 14 | 756.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Էլեկտրատեխնիկական | 17 | Ռադիոէլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, էլեկտրամեխանիկական կենցաղային նշանակության սարքավորումների փորձաքննություն | 17-01 | 99000 | 1 | 99.0 |
| Դատագենետիկական | 19 | Դատագենետիկական (ԴՆԹ-նույնականացման) փորձաքննություն | 19-01 | 99000 | 1 | 99.0 |
| Համակարգչատեխնիկական | 20 | Ցանցային փորձաքննություն | 20-01 | 63000 | 1 | 63.0 |
| | | Ծրագրային ապահովումների փորձաքննություն | 20-02 | 126000 | 2 | 252.0 |
| | | Համակարգիչների կոշտ սկավառակներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն | 20-03 | 144000 | 5 | 720.0 |
| | | Թվային տեսագրիչների կոշտ սկավառակներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն | 20-04 | 90000 | 2 | 180.0 |
| | | Բջջային հեռախոսների կամ պլանշետային համակարգիչների ներքին հիշողության կրիչներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն | 20-05 | 108000 | 4 | 432.0 |
| | | Այլ թվային հիշողության կրիչներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն | 20-06 | 54000 | 1 | 54.0 |
| | | Համակարգչային սարքավորումների, դրանց աշխատունակության և/կամ կիրառման նշանակության փորձաքննություն | 20-07 | 54000 | 2 | 108.0 |
| Դատաբժշկական | 21 | Անձի առողջությանը պատճառված վնասի փորձաքննություն | 21-01 | 9000 | 21 | 189.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Դատաբժշկական հանձնաժողովային կամ կրկնակի փորձաքննություն | 21-02 | 45000 | 14 | 630.0 |
| | | Կենսաբանական ծագման հետքերի և/կամ նմուշների փորձաքննություն | 21-03 | 9000 | 138 | 1242.0 |
| | | Հյուսվածքաբանական փորձաքննություն | 21-04 | 9000 | 9 | 81.0 |
| | | Քիմիական (այդ թվում՝ կենսաքիմիական) փորձաքննություն | 21-05 | 18000 | 44 | 792.0 |
| | | Բժշկա-քրեագիտական փորձաքննություն | 21-06 | 9000 | 3 | 27.0 |
| | | Դիակի դատաբժշկական փորձաքննություն | 21-07 | 40500 | 3 | 121.5 |
| | | Դատաբժշկական լրացուցիչ կամ համալիր փորձաքննություն | 21-08 | 22500 | 14 | 315.0 |
| Մշակութային արժեքների | 22 | Կերպարվեստի բնագավառի փորձաքննություն | 22-01 | 72000 | 5 | 360.0 |
| | | Դեկորատիվ կիրառական արվեստի բնագավառի փորձաքննություն | 22-02 | 63000 | 2 | 126.0 |
| | | Երաժշտական գործիքների փորձաքննություն | 22-03 | 45000 | 2 | 90.0 |
| | | Գրքարվեստի բնագավառի փորձաքննություն | 22-04 | 63000 | 2 | 126.0 |
| | | Հին դրամների փորձաքննություն | 22-05 | 63000 | 1 | 63.0 |
| | | Գեղագիտական փորձաքննություն | 22-06 | 45000 | 2 | 90.0 |
| | | Հնագիտական փորձաքննություն | 22-07 | 108000 | 2 | 216.0 |
| | | Մշակութաբանական այլ փորձաքննություն | 22-08 | 45000 | 2 | 90.0 |
| Հոգեբանական | 23 | Անձի հոգեբանական փորձաքննություն | 23-01 | 153000 | 5 | 765.0 |
| | | Հետմահու հոգեբանական փորձաքննություն | 23-02 | 153000 | 3 | 459.0 |
| | | Հոգեբանական այլ տեսակի փորձաքննություն | 23-03 | 108000 | 4 | 432.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ճարտարագիտա-տեխնիկական | 24 | Մեքենա-մեխանիզմների և սարք-սարքավորումների խափանման պատճառների և հետևանքների պարզման փորձաքննություն | 24-01 | 153000 | 2 | 306.0 |
| | | Արտադրությունում տեխնոլոգիական գործընթացներում շեղումների և խախտումների պատճառների և հետևանքերի պարզման փորձաքննություն | 24-02 | 153000 | 2 | 306.0 |
| | | Անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության կանոնների խախտման պատճառների և հետևանքների պարզման փորձաքննություն | 24-03 | 99000 | 2 | 198.0 |
| Օդորոլոգիական | 25 | Օդորոլոգիական, այդ թվում մարդու կողմից թողնված հոտային հետքերի փորձաքննություն | 25-01 | 72000 | 1 | 72.0 |
| Լինգվիստիկական | 26 | Գրավոր խոսքի փորձաքննություն | 26-01 | 90000 | 1 | 90.0 |
| | | Բանավոր խոսքի փորձաքննություն | 26-02 | 90000 | 1 | 90.0 |
| Էկոլոգիական | 27 | Հողային ռեսուրսների և երկրաբանական օբյեկտների փորձաքննություն | 27-01 | 144000 | 3 | 432.0 |
| | | Կենդանական և բուսական աշխարհի փորձաքննություն | 27-02 | 144000 | 1 | 144.0 |
| | | Ջրային ռեսուրսների և օբյեկտների փորձաքննություն | 27-03 | 180000 | 1 | 180.0 |
| | | Մթնոլորտային օդի փորձաքննություն | 27-04 | 108000 | 0 | 0.0 |
| | | Ճառագայթային իրավիճակի փորձաքննություն | 27-05 | 270000 | 0 | 0.0 |
| | | Շրջակա միջավայրի վրա այլ բնույթի ազդեցության փորձաքննություն | 27-06 | 108000 | 0 | 0.0 |
| Պայթյունատեխնոլոգիական | 28 | Պայթյունից վնասված օբյեկտների փորձաքննություն | 28-01 | 108000 | 2 | 216.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Նյութերի և տեխնոլոգիական սարքավորումների, այդ թվում տեխնոլոգիական գործընթացների պայթյունավտանգ հատկությունների և սարքավորումների աշխատանքի պայթյունավտանգ ռեժիմների փորձաքննություն | 28-02 | 108000 | 1 | 108.0 |
| | | Տեխնոլոգիական գործընթացների և տեխնոլոգիական սարքավորումների, շենքերի և շինությունների պայթյունային անվտանգության նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանության, դրանց պայթյունակայունության, պայթյունի հետևանքների հնարավոր նվազեցման միջոցներով ապահովվածության փորձաքննություն | 28-03 | 108000 | 1 | 108.0 |
| Մտավոր սեփականության օբյեկտների | 29 | Հեղինակային և հարակից իրավունքի բնագավառի փորձաքննություն | 29-01 | 252000 | 1 | 252.0 |
| | | Գյուտերի բնագավառի փորձաքննություն | 29-02 | 252000 | 1 | 252.0 |
| | | Արտոնագրման բնագավառի փորձաքննություն | 29-03 | 180000 | 1 | 180.0 |
| | | Օգտակար մոդելների բնագավառի փորձաքննություն | 29-04 | 180000 | 1 | 180.0 |
| | | Արտադրական նմուշների փորձաքննություն | 29-05 | 108000 | 1 | 108.0 |
| | | Առևտրային նշանների շփոթության աստիճանի նմանության պարզման փորձաքննություն | 29-06 | 252000 | 1 | 252.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | **745** | **36310.5** |

»